

մինչեւ եկեալ ես տեսից զքեզ, եւ խաւսեցեալ իմ եւ քո ընդ միմեանս՝ լուիցուք ի միմեանց՝ զոր ինչ ի դէպն թուի մեզ առնել»։ 4 Եւ Նիխորոյ լուեալ զեկն եւ զկամս ինդորոյն Մամիկոնենին Վահանայ՝ վաղվաղակի տայր տանել ցԿամսարականն տերն Շիրակայ Ներսէին զԲագէ զԱտրպայական շահապ¹ եւ զՎեհ-Վեհնամ² զՅայոց հազարապետ, եւ զՆերսշապուհ զՄիհրանայ զեղբայր, եւ հինգ³ եւս այր այլ աւագ Պարսիկս։ 5 Եւ Մամիկոնենին Վահանայ տեսեալ զաւագորեարն զոր առաքեալ էր Նիխորոյ՝ ընդունէր զնոսա ինդութեամբ. եւ ի միասին ուրախացեալք այն ար՝ ի վաղիւն թողոյր զութեսեան⁴ զնոսա առ իւր հաւատարիմ արս. որոց հրաման տայր՝ պատուել զնոսա արժանաւորապէս եւ զգուշանալ. եւ ինքն չուեալ⁵ զնդաւ եւ կազմութեամբ զնայր առ Նիխոր։ 6 Մերծեալք ի գիւղն ուր Նիխոր էր՝ հրամայէր զաւրուն որ ընդ նմա էին՝ վառել⁶ ըստ արինի պատրաստութեան պատերազմի. որք ընդ լսել ի Մամիկոնենեն⁷ Վահանայ զհրամանն՝ պատրաստեալք յամենայնի⁸ կազմ ցուցանէին նմա զանձինս։ 7 Տայր հրամանն Մամիկոնեանն Վահան հնչեցուցանել զփողսն պատերազմականս⁹. եւ ի սաստկութենէ փողոցն ձայնից հնչեալ երկիրն թնդէր. յորմանէ զարհուրեալք արք զաւրուն Նիխորոյ՝ կարծեցին, թէ խաբէութեամբ¹⁰ ի վնասել զնոսա եկն Մամիկոնեանն Վահան, եւ ոչ սիրով ի նուաճումն խաղաղութեան։

8 Եւ Նիխոր առաքեալ ընդ առաջ նորա արս աւագս՝ տայր ասել ցՄամիկոնեանն Վահան, եթէ «Ոչ ըստ կարգի Արեաց առնես դու զայդ, այլ նորոգ իրաւք այլ իմն ձեւանաս. յորում յայսմ հետէ քեզ կարի զԱրեաց զկարգն պարտ է ունել եւ հաւանել. քանզի ի չուի՝ փողով յԱրեաց բանակ¹¹ սպարապետն միայն Արեաց իշխէ մտանել, եւ այլ ոք զայդ համարձակութիւն ի Պարսիկս ոչ ոք իշխէ առնել»։ 9 Եւ Մամիկոնենին Վահանայ պատասխանի տուեալ Նիխորոյ՝ ասէր. «Նախ արա՛ զիս Արեաց տեառն ծառայ, ապա եւ առանց ի քէն իսկ ուսանելոյ՝ թուի թէ եւ ես իսկ գիտեմ զԱրեաց աշխարհի զկարգ եւ զարժանն. մի՛ թուեսցի քեզ հաշուել զիս կարի մոռացկոտ. քանզի եւ ոչ բազում ինչ ամաւք գնացեալ եմ ի ձեռն»։

1 ՁԱտ. բագէ... շահապապ

2 ԲԳտ. եւ զվեհնամ

3 ՏՏ. զհինգ

4 ՏՏ. զութեսին

5 Ձ. չուել

6 Ձ. վառեալ

7 Ձ. ի մամիկոնեն

8 Կամ ըստ Ձ. ամենայնի

9 Ձ. պատերազմողականս

10 ՏՏ. կարծէին խաբէութեամբ

11 Ձ. արեաց բանակ